


1158



Վ. Ի. Լենին

ՅԵՐԻՏԱՍԱՄԱՐԴՈՒԹՅԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ



ՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940

24 MAY 2005

ՊՐՈԼԵՏԱՐԻՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ՝ Ք

14 NOV 2000

3K23

6-85

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Կ.

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ճառ՝ արտասանած Ռուսաստանի կոմունիստական
լերիտասարդության միության Համառուսաստանյան
III համագումարում 1920 թ. հոկտեմբերի 2-ին

10 SEP 2013

7158

Ընկերներ, այսոր կկամենայի խռով ձեզ հետ այն նյութի շուրջը, թե վորոնք են կոմունիստական Յերեւանարդության Միության հիմնական խողիքները և դրա հետ կապված՝ թե ինչպես պետք ե լինեն յերեւանարդության կազմակերպությունները սոցիալիստական հանրապետության մեջ ընդհանրապես:

Այս հարցի վրա պիտի կանգ առնել առավել ևս, քանի վոր վորոշ իմաստով կարելի յե ասել, վոր կոմունիստական հասարակություն ստեղծելու բուն խընդիրը հատկապես յերիտասարդությանն ե վիճակված։ Վորովհետեւ պարզ ե, վոր կապիտալիստական հասարակության մեջ դաստիարակված աշխատղների սերմուգը, լավագույն դեպքում, կարող ե լուծել շահագործման վրա հիմնված հին, կասլիտալիստական կենցաղի հիմքերը վոչնչացնելու խնդիրը։ Լավագույն դեպքում նա կարող ե լուծել հասարակական այնպիսի կարգ ստեղծելու խողիքները, վորն ոգնի պրոլետարիատին և աշխատավոր դասակարգերին՝ իրենց ձեռքում պահելու իշխանությունը և ստեղծելու այնպիսի հաստատուն հիմք, վորի վրա կառուցել կարող ե միայն այն սերունդը, վորն աշխատանքի յե դիմում արդեն նոր պայմաններում, այնպիսի իրադրության մեջ, յերբ մարդկանց միջև շահագործական հարաբերությունն չկա:

Յեվ ահա այդ տեսակետից մոտենալով յերե-



В. И. ЛЕНИН
ЗАДАЧИ СОЮЗОВ МОЛОДЕЖИ

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

տասարդության խնդիրների հարցին, պետք է ասեմ, վոր ընդհանրապես յերիտասարդության և մասնավորապես կոմունիստական յերիտասարդության ու բուրր այլ կաղմակերպությունների այդ խնդիրները կարելի յե արտահայտել մի բառով՝ խնդիրն ե—սովորություն:

Հասկանալի յե, վոր դա միայն «մի բառ» ե: Նա գեռ պատասխան չի տալիս զիմանիոր և ամենահյական հարցերին—ի՞նչ սովորել և ի՞նչպես սովորել: Իսկ այսուղ ամբողջ բանն այն ե, վոր հին կապիտալիստական հասարակության /վերափոխության հետ մեկտեղ, կոմունիստական հասարակություն ստեղծելու կոչված նոր սերունդների ուսումը, դաստիարակությունն ու կրթությունը չի կարող հին ձեռվ լինել: Յերիտասարդության ուսումը, դաստիարակությունն ու կրթությունը պետք ե բղիքն այն նյութից, վորը թողել ե մեղ հին հասարակությունը:

Մենք կոմունիզմը կարող ենք կառուցել միայն զիտելիքների, կազմակերպությունների ու հիմնարդությունների այն դումարից, մարդկային ուժերի ու միջոցների այն պաշտոնի, վոր մնացել ե մեղ հին հասարակությունից: Միայն արժատապես վերափոխելով յերիտասարդության ուսումն, կաղմակերպման և դաստիարակության գործը՝ մենք կարող ենք հասնել այնքանին, վոր յերիտասարդ սերնդի ջանքերի արդյունքում լինի չնին չնմանող հասարակության, այսինքն՝ կոմունիստական հասարակության ստեղծումը:

Այդ իսկ պատճառով հարկավոր ե մանրամասն կանդ առնել այն հարցի վրա, թե մենք ինչ պետք ե սովորեցնենք յերիտասարդությանը և նա ի՞նչպես պետք ե սովորի, յեթե իրոք կամենում ե արդարացնել

կոմունիստական յերիտասարդության անունը, և ինչպես նախապատրաստենք նրան, վորպեսզի նա կարողանա կառուցել և ավարտել այն, ինչ վոր սկսել ենք մենք:

Ես պետք ե ասեմ, վոր առաջին ե, ըստ յերեկությն, ամենաբնական պատասխանն այն ե, վոր յերիտասարդության միությունը և ընդհանրապես կոմունիզմին անցնել ցանկացող վողջ յերիտասարդությունը պետք ե կոմունիզմ սովորի:

Բայց «կոմունիզմ սովորել» պատասխանը շատ ե ընդհանուր: Աւրեմն ի՞նչ ե հարկավոր մեղ կոմունիզմ սովորելու համար: Ընդհանուր զիտելիքների գումարից ի՞նչ ե մեղ հարկավոր առանձնացնել, վորպեսզի ձեռք բերենք կոմունիզմի զիտությունը: Այսուեղ մեղ սպառնում ե վասնդների մի ամբողջ շարան, վորոնք ամեն քայլափոխում յերեան են զալիս, հենց վոր կոմունիզմ սովորելու խնդիրը սխալ ե դրվում, կամ յերբ նա շատ միակողմանի յե հասկացվում:

Բնական ե, վոր առաջին հերթին միտք ե ծագում, թե կոմունիզմ սովորել նշանակում ե յուրացնել զիտելիքների այն պաշարը, վորը շարադրված ե կոմունիստական դասազրելուում, բրոցյուրներում և աշխատությունների մեջ: Սակայն կոմունիզմի ուսումնասիրության այդորինակ վորոշումը շատ կողիտ և անբարար կլիներ:

Եթե կոմունիզմի ուսումնասիրությունը միայն կոմունիստական աշխատություններում, բրոցյուրներում և զրբերում յեղածների յուրացնելը լիներ, այն ժամանակ մենք շատ հեշտությամբ կարող ենք կոմունիստական տիրացուներ և սնապարծներ ունենալ, իսկ դա մեղ համարյա միշտ վնաս կրերի, վորովհետեւ

այդ մարդիկ, սովորելով ու կարդալով այն ամենը, ինչ վոր շարադրված և կոմունիստական գրքիրում և բրոշյուրներում, անկարող կլինիքին կապակցել այդ բոլոր գիտելիքներն ու չեյին կարողութա գործել այնպես, ինչպես իրաք պահանջում ե կոմունիզմը:

Հին կապիտալիստական հասարակությունից մեղ մնացած ամենամեծ չարիքներից ու գժրախտություններից մեկն այն ե, վոր զիրքը կատարելապես կտըրված և գործնական կյանքից, վորովհետեւ մենք ունեցինք զրքեր, վորոնց մեջ ամեն ինչ նկարագրված եր ամենալավ ձեռվ, և այդ զրքերը, մեծ մասամբ, ամենապղնիլի, կեղծավոր սուս եյին, վոր ստահող կերպով եյին պատկերում մեղ կոմունիստական հասարակությունը: Այդ պատճառով պարզապես զրքից յուրացնել այն, ինչ ասլած ե զրքերում կոմունիզմի մասին, վերին աստիճանի սխալ կլիներ:

Այժմ մեր ճառերում և հոգվածներում չկա սովորական կրկնությունն այն բանի, ինչ վոր առաջ առ վում եր կոմունիզմի մասին, վորովհետեւ մեր ճառերն ու հոգվածները կապված են ամենորյա և բազմակողմանի աշխատանքի հետ: Սուսնց աշխատա քի, ստանց պայքարի՝ կոմունիստական բրոցուրներից և աշխատություններից յուրացրած կոմունիզմի պրայտի գիտությունը միանդամյն անարժեք ե, վորովհետեւ նա կշարունակեր անսության և գործնականի մեջ յեղած անսկին կտրվածությունը, այն հին կտրվածությունը, վոր հին բուրժուական հասարակության ամենապղնիլի զիջն եր կազմում:

Ե՛լ ամելի վտանգավոր կ'իներ, յեթե մենք սկսեյինք յուրացնել միայն կոմունիստական բրոցունդները: Յեթե մենք ժամանակին չհամարանայինք այդ միտանդը և յե-

թէ մենք մեր ամբողջ աշխատանքը չկենտրոնացնելինք այդ վտանգը վերացնելու համար, այն ժամանակ կես կամ մեկ միլիոն մարդու, յերիտասարդների և աղջկիների առկայությունը, վորոնք կոմունիզմն այդպես սովորելուց հետո իրենց կոմունիստներ եյին անվանելու, մեծ վնաս կհասցներ կոմունիզմի գործին:

Այստեղ մեր առաջ հարց և ծագում, թէ ի՞նչպես պետք և այդ ամենը մենք կապակցենք կոմունիզմ սովորեցնելու համար: Ի՞նչ պետք և վերցնենք մենք հին պարզոցից, հին գիտությունից:

Հին գոլրոցը հայտարարում եր, վոր նա ուզում ե րաբմակաղմանի կրթություն ունեցող մարդիկ պատրաստել, վոր նա ընդհանրապես դիտություններ և սովորեցնում: Մենք զիտենք, վոր այդ միանդամյն սուս եր, վորովհետեւ վողջ հասարակությունը հիմնված եր և պահպանվում եր մարդկանց՝ դասակարգերի, շահագործողների և ճնշվածների բաժանվելու գրա: Բնական ե, վոր բովանդակ հին գալրոցն ամբողջությամբ համակված լինելով գասակարդային վորով, միայն բուրժուազիայի յերեխաներին եր գիտելիքներ տալիս: Նրա յուրաքանչյուր բառը կեղծված եր չսղուս բուրժուազիայի շահերի:

Այդ գոլրոցներում բանվորների և գյուղացիների յերիտասարդ սերնդին վոչ այնքան դաստիարակում, վորքան վարժեցնում եյին հոգուտ նույն այդ բուրժուազիայի շահերի: Նրանց այնպես եյին դաստիարակում, վոր բուրժուազիայի համար պիտանի ծառաներ ստեղծեն, վորոնք ընդունակ լինեն նրան շահույթ տալու և միաժամանակ չվրդովին նրա հանդիսան ու անգործությունը: Այդ պատճառով, ժխտելով հին գըտրոցը, մենք նպատակ ենք զբեկ վերցնել նբանից միայն

այն, ինչ վոր մեղ հարկավոր ե խսկական կոմունիստական կրթություն ստանալու համար:

Այստեղ յես մոտենում եմ հին դպրոցի հասցեյին մշտակես լավող այն կշտամբանքներին, այն մեղադրանքներին, վորոնք հաճախ միանգամայն սխալ մեկնությունների պատճառ են դառնում:

Ասում են, վոր հին դպրոցը յեղել ե մեքենայորեն սովորեցնելու դպրոց, խստությամբ վարժեցնելու, անդիր անել տալու դպրոց: Այդ ճշմարիտ ե, բայց և այնպես ոկտաֆ ե կարողանալ զանազանել, թե հին դպրոցում մեղ համար ինչ վատ և ինչ ողտակար բան կար, պետք ե դիտենալ նրանից ընտրել այն, ինչ վոր անհրաժեշտ ե կոմունիզմին:

Հին դպրոցը յեղել ե մեքենայորեն սովորեցնելու դպրոց, նա ստիպում եր մարդկանց յուրացնել բարձաթիվ անպետք, ավելորդ, մեռած զիտելիքներ, վորոնցով լցնում եին զլուխներն ու յերիտասարդ սերընդին միաձև չինովնիկներ դարձնում: Բայց դուք մեծ սխալ արած կլինեյիք, յեթե փորձեյիք յեղրակացնել, թե կարելի յե կոմունիստ դառնալ, առանց յուրացնելու այն, ինչ վոր կուտակել ե մարդկային դիտությունը: Սխալ կլիներ կարծել, թե բավական ե յուրացնել կոմունիստական լողունղները, կոմունիստական դիտության յեղրակացությունները, առանց յուրացնելու դիտությունների այն պաշարը, վորոնց հետևանքն ե ինքը կոմունիզմը:

Թե ինչպես ե հրապարակ յեկել կոմունիզմը մարդկային դիտությունների դումարից, դրա որինակը մարքուիզն ե:

Դուք կարդացել ու լսել եք, թե ինչպես կոմունիստական թեորիան, կոմունիստական դիտությունը, վոր

զվարակուալես ստեղծել ե Մարքու, թե ինչպես մարքուի միջի այդ ուսմունքը դադարել ե մեկ մարդու, թե կուգ և XIX դարի հանճարեղ սոցիալիստի, աշխատություն լինելուց, թե ինչպես այդ ուսմունքը դարձել է վորոնց աշխարհի միլիոնավոր և տամնյակ-միլիոնավոր սրբաւտարների ուսմունքը, վորոնք դործադրում են այդ ուսմունքը կամիստալիզմի դեմ իրենց մղած պայքարում:

Յեկ յեթե դուք հարց տայիք, թե ինչու Մարքուի ուսմունքը կարողացավ տիրապետել ամենահեղափոխական դասակարգի միլիոնավոր և տամնյակ-միլիոնավոր մարդկանց սրբերին, կարող եյիք ստանալ մեկ պատասխան: այդ տեղի ունեցավ այն պատճառով, վոր Մարքու հենվում եր կամիստալիզմի որով նվաճված մարդկային զիտությունների կայուն պատվանդանին: Ուսումնաբերելով մարդկային հասարակության զարգացման որենքները, Մարքուն ըմբռնեց կամիստալիզմից դեպի կոմունիզմ տանող զարգացման անխուսափելիությունը և, զիմափորը, նա այդ առաջուցեց միայն կամիստալիստական հասարակության ամենածզրիտ, ամենամահերակրկիտ և ամենախորն ուսումնասիրության հիման վրա, լիովին յուրացնելով այն ամենը, ինչ վոր ավել ե նախկին դիտությունը:

Այն ամենը, ինչ վոր ստեղծել եր մարդկային հասարակությունը, նա վերամշակեց քննադատորեն, վոչ մի կետ անուշադիր չթողնելով: Այն ամենը, ինչ վոր ստեղծել եր մարդկային միտքը, նա վերամշակեց, քննադատության յենթարկեց, ստուգելով բանվորական շարժման վրա, և հանդեց այն յեղրակացություններին, վորոնք չեյին կարող անել բուրժուական ըրջանա-

կով սահմանափակված կամ բուրժուական նախառա-
շարումներով կաշկանդված մարդիկ :

Այդ պետք ե նկատի ունենանք, յեթե, որինակ,
մենք խոսում ենք պրոլետարական կուլտուրայի մա-
սին : Առանց պարզ ըմբռնելու այն, վոր միայն մարդ-
կային վողջ զարգացմամբ ստեղծված կուլտուրան ճշ-
գրիտ գիտենալով, միայն նրա վերամշակմամբ կարե-
մի յե կառուցել պրոլետարական կուլտուրա, —առանց
այս հասկանալու, մենք այդ խնդիրը լուծել չենք կա-
րող :

Պրոլետարական կուլտուրան մի ինչ-վոր անհայտ
տեղից գուրս պրծած, իրենց պրոլետարական կուլտու-
րայի մասնագետներ անվանող մարդկանց մտացածին
բանը չե : Այդ ամենն ամբողջապես անհեթեթություն
է : Պրոլետարական կուլտուրան պետք ե լինի որինա-
կան զարգացումը գիտության այն պաշարի, վորը
ժշակել ե մարդկությունը՝ կապիտալիստական հասա-
րակության, կալվածատիրական հասարակության, չի-
նովնիկական հասարակության ճնշման տակ :

Բոլոր այդ ճամբաններն ու կածանները բերել են,
բերում են ու կրերեն դեպի պրոլետարական կուլտու-
րան, այնպես, ինչպես Մարքսի վերամշակած քաղա-
քատնտեսությունը ցույց տվեց մեղ, թե ուր ե հասնե-
լու մարդկային հասարակությունը, մատնանշեց դա-
սակարգային պայքարին, պրոլետարական հեղափոխու-
թյան սկզբնավորմանն անցնելը :

Յերբ մենք և' յերիտասարդության ներկայացու-
ցիներից, և' նոր կրթության պաշտպաններից մի քա-
նիսից հաճախ հարձակումներ ենք լուսում հին դպրոցի
դեմ, —թե հին դպրոցը յեղել ե անդիք անելու դըպ-

բոց, —մենք նրանց ասում ենք, վոր մենք պետք ե
վերցնենք այն լավը, վոր յեղել ե հին դպրոցում :

Մենք հին դպրոցից չպետք ե վերցնենք այն, վոր
յերիտասարդ մարդու հիշողությունը ծանրաբեռնում
ելին իննը տասերորդով անպետք և մեկ տասերորդով
աղճատված անթիվ գիտություններով . բայց այդ չի
նշանակում, թե մենք կարող ենք սահմանափակվել
միայն կոմունիստական յեղակացություններով, մե-
այն կոմունիստական լողունզներ սերտելով : Դրանով
կոմունիզմ չես ստեղծի : Կոմունիստ կարելի յե դառնալ
միայն այն ժամանակ, յերբ հարստացնես հիշողու-
թյունդ մարդկության մշակած գիտության բոլոր հա-
րստություններով :

Մեզ պետք չե անդիք անել, բայց մենք յուրաքանչյուր
տովորովի հիշողությունը պետք ե զարգացնենք ու կա-
տարելագործենք հիմնական փաստերով, այլապես կո-
մունիզմը կդառնա դատարկություն, կդառնա մի դա-
տարկ ցուցանակ . կոմունիստը կլինի լոկ հասարակ
պարծենկոտ, յեթե նրա գիտակցության մեջ չվերա-
մշակվեն իր ստացած բոլոր դիտությունները : Դուք
պետք ե վոչ միայն յուրացնեք դրանք, այլ յուրացնեք
այնպես, վոր քննադատորեն վերաբերվեք նրանց, վոր
չժանրաբեռնեք ձեր ուղեղն այն հնոտիով, վորը պետք
չե, այլ հարստացնեք այն բոլոր փաստերի դիտու-
թյամբ, առանց վորոնց չի կարելի ժամանակակից
կրթված մարդ լինել :

Յեթե կոմունիստի խելքին փչեր պարծենալ կոմու-
նիզմով, իր ստացած պատրաստի յեղակացություննե-
րի հիման վրա, առանց ամենալուրջ, ամենադժվարին,
մեծ աշխատանք կատարելու, առանց ըմբռնելու փաս-
տերը, վորոնց նա պարտավոր ե քննադատորեն վերա-

քերպել, այդպիսին չառ ցավալի կոմունիստ կլիներ : Մաքալիսի թեթևամտությունը վճռականապես կորըստարեր կլիներ : Յեթե յես զիտեմ, վոր իմ խմացածը քիչ ե, կաշմատեմ չառ զիտենալ բայց յեթե մարդարի, թե ինքը կոմունիստ ե և պետք չունի հիմնական վոչ մի բան զիտենալու, այդ գեղը ուժում նրանից կոմունիստ հիշեցնող վոչ մի բան դուրս չի դա :

Հին գպրոցը կապիտալիստների համար անհրաժեշտ սպասավորներ եր պատրաստում, Հին գպրոցը զիտության մարդկանցից պատրաստում եր այնպիսի մարդիկ, վորոնք պետք ե զրեցին ու խոռեցին այնպես, ինչպես ցանկալի յե կապիտալիստներին : Այդ նշանակում ե, վոր մենք այդ գպրոցը պետք ե վերացնենք: Բայց յեթե մենք պետք ե վերացնենք այդ գպրոցը, յեթե մենք պետք ե քանդենք այդ դպրոցը, միթե այդ նշանակում ե, վոր նրանից չպետք ե վերցնենք մարդուն անհրաժեշտ այն ամենը, ինչ վոր ամբարված և մարդկության կողմից :

Այդ նշանակում ե արդյոք, վոր մենք չպետք ե մարդունանք տարբերել այն, թե ի՞նչն եր անհրաժեշտ կապիտալիստին, և ի՞նչն ե անհրաժեշտ կոմունիզմին :

Յուրժուական հասարակության մեջ մեծամասնության կամքին հակառակ կիրառվող խսությամբ վարժեցնելը մենք փոխարինում ենք բանվորության և գյուղացիության զիտակցական կարգապահությամբ, վորոնք զեափի հին հասարակությունն ունեցած առելությանը միացնում են այդ պայքարի համար ուժերը միավորելու և կազմակերպելու վճռականություն, հմտություն ու պատրաստակամություն, վորպետք հսկայական յերկրի ընդարձակ տարածության վրա

ցրված, բաժան-բաժան, ցիրուցան միլիոնների և հարյուրավոր միլիոնների կամքից ստեղծվի մեկ կամք, վորովհետև առանց այդ միանական կամքի՝ մենք անխուսափելուրեն ջարդութշուր կլինենք: Առանց բանվորների ու զյուղացիների այդ համախմբման, առանց այդ զիտակցական կարգապահության մեր գործն անհուսալի յի: Առանց գրան մենք չենք կարող հաղթել վողջ աշխարհի կապիտալիստներին ու կարվածատերերին: Մենք նույնիսկ չենք կարողանա ամբացնել հիմքը, ել չենք խոսեմ այդ հիմքի վրա նոր, կոմունիստական հասարակություն կառուցելու մասին:

Նմանապես ժխտելով հին գպրոցը, միանդամայն որինական և անհրաժեշտ ատելության տածելով գեղի այդ հին գպրոցը, թանդ զնահատելով հին գպրոցը խորտակելու պատրաստակամությունը, մենք պետք ե հսկանանք, վոր հին ուսումը, հին սերտումը, հին խոտությամբ վարժեցնելը պետք ե փոխարինենք մարդկային զիտությունների վողջ պաշարը մեկ վերցնելու կարողությամբ և վերցնենք այնպես, վոր կոմունիզմը ձեզ համար ինչ-վոր սերտած բան չինի, այլ գառնա ձեր մտածոծը, այն յեղթակացությունները, վորոնք անխուսափելի յին ժամանակակից կրթության ահապետով:

Ահա ինչպես պիտի զնել հիմնական խնդիրը, յերբ մենք կոմունիզմ սովորելու խնդրի մասին ենք խոսում :

Վորպետքի այս հարցը պարզիմ ձեղ, միաժամանակ մոտենալով նաև ի՞նչպես սովորելու հարցին, յեզ կվերցնեմ գործնական որինակ: Դուք բոլորդ ել զիտք, վոր մեր առաջ ուսումնական խնդիրներից, համարպետության պահպանման խնդիրներից անմիջապես չետք ծառանում ե անտեսական խնդիրը:

Մենք գիտենք, վոր կոմունիստական հասարակություն չի կարելի կառուցել առանց արդյունաբերության ու հողագործությունը վերածնելու, ընդվորում գրանք պետք ե վերածնել վոչ հին ձևերով: Պետք ե գրանք վերածնել զիտության վերջին խոսքի համաձայն կառուցված ժամանակակից հիմքի վրա: Դուք գիտեք, վոր այդ հիմքը ելեկտրականությունն ե, վոր յերբ վողջ յերկիրը, արդյունաբերության և հողագործության բոլոր ճյուղերը յենթարկվեն ելեկտրիֆիկացման, յերբ զուք այդ խնդիրը կյուրացնեք, այն ժամանակ միայն կարող եք ստեղծել այն կոմունիստական հասարակությունը, վորը հին սերունդը չի կարող կառուցել:

Զեր առջեւ խնդիր ե ծառացած՝ տնտեսապես վերածնել ամբողջ յերկիրը, վերակառուցել, վերականգնել և' հողագործությունը, և' արդյունաբերությունը ժամանակակից տեխնիկական հիմքի վրա, վորը խարսխված ե արդի զիտության, տեխնիկայի վրա, ելեկտրականության վրա:

Դուք շատ լավ զիտեք, վոր անդրադես մարդիկ ելեկտրիֆիկացիային հարմար չեն դա, և այսուղ հասարակ զրագիտությունը դեռ բարձրական չե: Բավական չե ըմբռնել, թե ի՞նչ ե ելեկտրականությունը, հարկավոր ե իմասնալ, թե տեխնիկապես ի՞նչպես գործադրել այն՝ և' արդյունաբերության, և' հողագործության, և' նրանց առանձին ճյուղերի մեջ: Այդ բանը պիտի սովորեք ինքներդ, պիտի սովորեցնեք աճող աշխատավոր վողջ սերնդին:

Ահա այն խնդիրը, վորը կանդնած ե յուրաքանչյուր զիտակից կոմունիստի, ամեն մի յերիտասարդ մարդու առաջ, վորն իրեն կոմունիստ ե համարում և

պարզ հաշիվ ե տալիս, թե մտնելով Յերիտասարդության կոմունիստական Միության շարքերը, խնդիր ե հանձն առել ոժանդակելու կուսակցությանը կոմունիզմ կառուցելու և ոգնելու վողջ յերիտասարդներին՝ կոմունիստական հասարակություն ստեղծելու: Նա պետք ե հասկանա, վոր նա միայն ժամանակակից կրթության հիման վրա կարող ե ստեղծել այն, և յեթե նա չտիրապետի այդ կրթությանը, կոմունիզմը լոկ ցանկություն կմնա:

Նախորդ սերնդի նպատակը սահմանափակվում եր բուրժուազիայի տապալումով: Այն ժամանակ գլխավոր խնդիրն եր՝ բուրժուազիային քննադատելը, մասսայի մեջ դեպի նա ատելություն զարթեցնելը, դասակարգային զիտակցություն գարզացնելը, իր ուժեղը համախմբել կարողանալը:

Նոր սերնդի առաջ ավելի բարդ խնդիր ե կանգնած: Բավական չե, վոր դուք պետք ե միացնեք ձեր բոլոր ուժերը, վորպեսզի պաշտպանեք բանվորա-դյուրագիտական իշխանությունը կազմակերպի ներխուժություց: Այդ դուք պարտավոր եք անել: Այդ դուք չափ լավ եք հասկացել, այդ պարզ պատկերացնում ե ամեն մի կոմունիստ: Բայց այդ բավական չե:

Դուք պետք ե կոմունիստական հասարակություն կառուցեք: Աշխատանքի առաջին կեսը շատ կողմերով կատարված ե: Հինը խորտակված ե, ինչպես և պետք եր խորտակել. նա ավելաների մի կույտ ե ներկայացնում, ինչպես և պետք եր այն ավելաների կույտ դարձել: Հողը մաքրված ե, և այդ հողի վրա կոմունիստական յերիտասարդ սերունդը պետք ե կոմունիստական հասարակություն կառուցի:

Զեր առաջ կանգնած ե շինարարության խնդիրը,

և դուք կարող եք լուծել այն միայն տիրապետելով
ժամանակակից վողջ զիտությանը, կարողանալով կո-
մունիզմը պատրաստի սերտած Փորմուլաներից, խոր-
հուրգներից, դեղատոմներից, առաջադրություններից,
ծրագրերից դարձնել ձեր անմիջական աշխատանքը
միայնող կենդանի դործ, դարձնել կոմունիզմը ձեր
դործնական աշխատանքի ուղեցույցը:

Ահա ձեր խնդիրը, վորով պետք ե առաջնորդի եք
ամբողջ յերիտասարդ սերնդի կրթության, դաստիա-
րակման, բարձրացման գործում: Դուք պետք ե գառ-
նաք կոմունիտական հասարակության առաջն կա-
ռուցողները միլիոնավոր կառուցողների մեջ, վորպե-
սին պետք ե լինի յուրաքանչյուր յերիտասարդ մարդ,
յուրաքանչյուր յերիտասարդ աղջիկ:

Առանց բանվոր և դյուզացի յերիտասարդության
վողջ մասսային կոմունիզմի այդ շինարարությանը
ներգրավելով՝ դուք կոմունիտական հասարակություն
էք կառուցի:

Այստեղ յետ բնականորեն մոտենում եմ այն հար-
ցին, թե մենք ի՞նչպես պետք ե կոմունիզմ սովորեց-
նենք, վո՞րը պետք ե լինի մեր յեղանակների առանձ-
նահատկությունը:

Այստեղ յետ ամենից առաջ կանոն կոմու-
նիտական մորալի վրա:

Դուք պետք ե ձեզանից կոմունիտաներ գաստիարա-
կեք: Յերիտասարդության Միության նպատակն ե՝
իր գործնական աշխատանքը կառուցել այնպես, վոր
սովորելով, կազմակերպվելով, համախմբվելով, պայ-
քարելով, այդ յերիտասարդությունն իրեն և բոլոր
նրանց, ովքեր նրան իրենց զեկավար են համարում,
կոմունիտաներ դաստիարակի: Ժամանակակից յերի-

տասարդության դաստիարակության, կրթության և
ուսման վողջ զործը պետք են նրանց մեջ կոմունիտա-
կան մորալի դաստիարակում դառնա:

Բայց դոյցություն ունի^o արդյոք կոմունիտական
մորալ: Դոյցություն ունի^o արդյոք կոմունիտական
բարոյականություն: Իհարկե, այս: Հաճախ այնպես
են պատկերացնում, վոր մենք չունենք մեր մորալը և
շատ հաճախ բուրժուազիան մեղ մեղադրում ե, թե
մենք կոմունիտաներս ժխտում ենք ամեն տեսակ մո-
րալ: Դա հասկացողությունները շփոթելու, բանվոր-
ների և զյուղացների աչքին թող փչելու միջոց ե:

Մենք ի՞նչ իմաստով ենք ժխտում մորալը, ժը-
տում բարոյականությունը:

Այն իմաստով, ինչ իմաստով այն քարոզում +
բուրժուազիան, վորն այդ բարոյականությունը ներ-
կայացնում ե վորպես աստծու պատվիրանից բոլոր
մի բան: Մենք այդ առթիվ, իհարկե, ասում ենք, վոր
աստծուն չենք հավատում և շատ լավ գիտենք, վոր
աստծու անոնից խսում ենին հողենորականները, խո-
սում ենին կալվածատերերը, խսուսմ եր բուրժուա-
զիան, Վորովելի իր շահագործական նպատակներն
իրականացնի: Կամ այդ մորալը բարոյականության
թելագրանքից, աստվածային թելագրանքից բղիսեցնե-
լու փոխարեն, բղիսեցնում ենին իդեալիստական կամ
կիսակեալիստական ճոռոմարդանությունից, վորը
նույնպես միշտ հանդում եր աստծու պատվիրանին
շատ նման բանի:

Նման ամեն մի բարոյականություն, վոր դուք և
մարդկային, դաստիարակային հասկացողությունից
մենք ժխտում ենք: Մենք ասում ենք, վոր դա կեղծիք
ե, վոր դա խարերայություն ե և բանվորների ու դյու-

զայիների միտքը խճողելն ե՝ կալվածատերերի և կապիտալիստների շահերի համար:

Մենք ասում ենք, վոր մեր բարոյականությունն ամբողջովին յենթակա յե պրոլետարիատի դասակարգին պայքարի շահերին: Մեր բարոյականությունը բղիում ե պրոլետարիատի դասակարգային պայքարի շահերից:

Հին հասարակությունը հիմնված եր կարլածատերերի և կապիտալիստների կողմից բոլոր բանվորներին և զյուղացիներին ճնշելու վրա: Մեղ հարկավոր եր խորտակել այդ, հարկավոր եր դեն շարժել նրանց, բայց դրա համար հարկավոր ե միացում ստեղծել: Աստվածիկն այդպիսի միացում չի ստեղծի:

Այդպիսի միացում կարող եյին ստեղծել միայն ֆարբիկաները, գործարանները, միայն սովորած, հին չնից արթնացած պրոլետարիատը: Միայն այն ժամանակ, յերբ այդ դասակարգը գոյացափ, սկսվեց մասամայական շարժումը, վորի արդյունքը յեղալ այն, ինչ վոր այժմ մենք ունենում ենք՝ պրոլետարական հեղափոխության հաղթանակին ամենաթույլ յերկրներից մեկում, վորն ահա յերեք տարի յե պաշտպանում ե իրեն համաշխարհային բուրժուազիայի դրոհից:

Յեկ մենք ունենում ենք, թե ինչպես պրոլետարական հեղափոխությունն ածում ե ամբողջ աշխարհում: Մենք այժմ փորձի հիման վրա ասում ենք, վոր միայն պրոլետարիատը կարող եր կազմել մի այդպիսի կուռուժ, վորի հետեւից դնում ե շահաղործողների ամեն տեսակ ճնշումներին դիմացած, բաժան-բաժան, ցիրուցան պյուղացիությունը: Միայն այդ դասակարգը կարող ե ողնել աշխատավոր մասսային միանալու, խտացնելու իր շարքերը և վերջնականապես պաշտպա-

նելու, վերջնականապես ամբագնդելու, վերջնականապես կառուցելու կոմունիստական հասարակությունը:

Ահա թե ինչու մենք ասում ենք՝ մեղ համար մարդկային հասարակությունից դուրս վերցրած բարոյականություն գոյություն չունի, դա խարեյություն ե: Մեղ համար բարոյականությունը յենթակա յե պրոլետարիատի դասակարգային պայքարի շահերին:

Իսկ ի՞նչ ե այդ դասակարգային պայքարը: Դա թագավորին տարալելն ե, կապիտալիստներին տապալելը, կապիտալիստների դասակարգը վոչչացնելը:

Իսկ ի՞նչ են դասակարգերն ընդհանրապես: Այդ այն ե, վորը թույլ ե տալիս հասարակության մի մասին՝ յուրացնել մյուս մասի աշխատանքը:

Յեթե հասարակության մի մասը սեփականացնում ե ամբողջ հողը, մենք ունենում ենք կալվածատերերի և զյուղացիների դասակարգեր: Յեթե հասարակության մի մասն ունի գործարաններ և ֆարբիկաներ, ունի ակցիաներ ու կապիտալ, իսկ մյուս մասն աշխատում ե այդ ֆարբիկաներում, —մենք ունենք կապիտալիստների և պրոլետարների դասակարգեր:

Թագավորին քչելը գժվար չեր—դրա համար պետք յեղավ ընդամենը միքանի որ: Շատ գժվար չեր քչել կալվածատերերին, այդ կարելի յեր անել միքանի առուժ: շատ գժվար չե քչել և կապիտալիստներին:

Բայց դասակարգերը վոչչացնելն անհամեմատ ավելի գժվար ե, զեռ մնացել ե բաժանումն բանվորների և զյուղացիների: Յեթե գյուղացին նստած ե տուանձին հողամասի վրա և յուրացնում ե ավելորդ հացը, այսինքն այն հացը, վորը պետք չե վոչ իրեն, վոչ իր անառունին, իսկ մյուսները բոլորը մնում են առանց հացի, ապա գյուղացին դառնում ե արդեն շա-

հաղործող: Վորքան ավելի հաց և թողնում նա իր համար, այնքան ձեռնուու յե իրեն, իսկ մյուսները թող սոված մնան. «Լորքան ավելի սոված լինեն նրանք, այնքան յես թանդ կվաճառեմ այս հացը»:

Հարկավոր ե, վոր բոլորն աշխատեն մի ընդհանուր պլանով ընդհանուր հոգի վրա, ընդհանուր Փաքրիկաներում ու գործարաններում և ընդհանուր կարգով: Հե՞շտ և արդյոք այդ անել: Տեսնում եք, վոր այստեղ չի կարելի նույնքան հեշտությամբ վորոշման, հանդել, ինչպես թագավորին, կարվածատերերին ու կապիտալիստներին վոնդելը: Այստեղ հարկավոր ե, վոր պրոլետարիատը վերադասարակի, վերասովորեցնի դյուզացիության մի մասին, իր կողմը քաշի նրանց, ովքեր աշխատավոր դյուզացիներ են, վորպեսդի վոչնչացնի այն դյուզացիների գիմաղրությունը, վորոնք հարուստ են և հարստանում են մնացածների կարիքի հաշվին:

Նշանակում ե պրոլետարիատի պայքարը գեռ վերջացած չե նրանով, վոր մենք տապալեցինք թագավորին, վոնդեցինք կարվածատերերին ու կապիտալիստներին. և հենց դրա ավարտումն է կազմում պրոլետարիատի գիտատուրա կոչված իրավակարդի նպատակը:

Դասակարգային պայքարը շարունակվում է, նա միայն փոխել ե իր ձեռքը: Դա պրոլետարիատի գասակարգային պայքարն ե նրա համար, վորպեսզի հին շահագործողները չկարողանան վերադառնալ, վորպեսզի խավար դյուզացիության բաժան-բաժան յեղած մասսան մի միություն կազմի: Դասակարգային պայքարը շարունակվում է, և մեր խնդիրն է բոլոր շահերը յենթարկել այդ պայքարին:

Յեվ մենք մեր կոմունիստական բարոյականությունը յենթարկում ենք այդ խնդրին: Մենք ասում ենք՝ բարոյականությունն այն ե, վորը ծառայում է Հին, շահագործողների հասարակության կործանմանը և բոլոր աշխատավորների միավորմանը կոմունիսաներինը հոր հասարակությունն ստեղծող պրոլետարիատի շուրջը:

Կոմունիստական բարոյականությունն այն բարոյականությունն ե, վորը ծառայում է այդ պայքարին, վորը միացնում է աշխատավորներին ընդկեմ ամեն տեսակ շահագործման, ընդդեմ ամեն տեսակ մանր սեփականության, վորովհետեւ մանր սեփականությունը մեկ մարդու ձեռքն է տալիս այն, ինչ վոր ստեղծուած է վողջ հասարակության աշխատանքով:

Մեզ մոտ հոգը համարվում է ընդհանուր սեփականություն:

Իսկ յեթե յես այդ ընդհանուր սեփականությունից վորու կտոր վերցնում եմ ինձ; Նրա վրա մշակում եմ յերկու անդամ ավելի հաց, քան հարկավոր ե ինձ, և հացի ավելցուկով սպեկուլացիա^ա յիմ անում: Մտածում եմ, թե քանի շատ քաղցածներ լինեն, այնքան ավելի թանդ կլճարեն: Մի՞թե այն ժամանակ յես կոմունիստի պես եմ վարդում:

Վո՞չ, վորպես շահագործող, վորպես սեփականատեր: Դրա դեմ պետք ե պայքարել:

Յեթի այդպես թողնենք, այն ժամանակ ամեն ինչ կուրպի դեպի հետ, դեպի կապիտալիստների իշխանությունը, դեպի բուրժուազիայի իշխանությունը, ինչպես մի անդամ չե, վոր տեղի յե ունեցել նախկին հեղափոխությունների ժամանակ: Յեվ վորպեսզի կըրկին չվերականդնվի կապիտալիստների ու բուրժուա-

զիայի իշխանությունը, դրա համար հարկավոր է թույլ չտալ չարջություն, դրա համար հարկավոր է, վոր առանձին անձեր ի հաշիվ ուրիշների չհարստանան, դրա համար հարկավոր է, վոր ամբողջ աշխատավորությունը միանա պրոլետարիատին և կոմունիստական հասարակություն կազմի:

Հենց այդ ե կոմունիստական յերիտասարդության միության և կաղմակերպության հիմնական խնդրի գլխավոր առանձնահատկությունը:

Հին հասարակությունը հիմնված եր այն սկզբունքի վրա, վոր կամ դու յես թալանում ուրիշին, կամ ուրիշը՝ քեզ, կամ դու յես աշխատում ուրիշի համար, կամ ուրիշը՝ քեզ համար, կամ դու ստրկատեր ես, կամ ինքը ստրուկ ես։ Յեկ հասկանալի յե, վոր այդ հասարակության մեջ դաստիարակված մարդիկ, կարելի յե ասել, մոր կաթի հետ ժառանգում են այն հոգերանությունը, սովորությունը, հասկացողությունը, թե՝ կամ ստրկատեր, կամ ստրուկ, կամ մանր սեփականատեր, մանր ծառայող, մանր չինովնիկ, ինտելիգենտ, մի խոսքով՝ մի մարդ, վորը հոդ ե տանում իր սեփականն ունենալու համար, իսկ ուրիշների հետ գործ չունի:

Յեթե յես ոնտեսություն եմ վարում այս հոգածասի վրա, հաշիվ չունեմ ուրիշների հետ. յեթե ուրիշը սոված մնա, ավելի լավ, յես ավելի թանդ կլաճառեմ իմ հացը։ Յեթե յես ունեմ իմ տեղը, վորպես բժիշկ, վարպես ինժեներ, ուսուցիչ, ծառայող, ուրիշների հետ գործ չունեմ։ Գուցե իշխանավորներին չույզ, հաճոյանալով, յես կողահպանեմ իմ տեղը, զուցե և կարողանամ առաջ դնալ, բուրժուա դառնալ։

Այդպիսի հոգերանություն և այդպիսի արամագրություն կոմունիստ ունենալ չի կարող։

Յերբ բանվորներն ու դյուզացիներն ապացուցեցին, վոր մենք դիտենք մեր ուժերով պաշտպանել մեզ և նոր հասարակություն ստեղծել, ահա այստեղից ել սկսվեց նոր, կոմունիստական դաստիարակությունը, գաստիարակություն շահագործողների դեմ մղված պայքարում, գաստիարակություն պրոլետարիատի հետ գաշինք կնքած՝ ընդդեմ յեսասկերների և մանր սեփականատերների, ընդդեմ այն հոգերանության և սովորությունների, վորոնք ասում են՝ յես իմ ողտին եմ գոտում, իսկ ուրիշների հետ վոչ մի հաշիվ չունեմ։

Ահա թե վո՞րն ե այն հարցի պատասխանը, թե ինչպես պետք ե կոմունիզմ սովորի յերիտասարդ աճող սերունդը։

Նա կարող ե կոմունիզմ սովորել, միայն իր ուսման, գաստիարակության և կրթության յուրաքանչյուր քայլը կապելով հին, շահագործական հասարակության դեմ պրոլետարիատի և աշխատավորության մղած անընդհատ պայքարի հետ։

Յերբ մեղ հետ խոսում են բարոյականության մասին, մենք ասում ենք, կոմունիստի համար բարոյականությունն ամբողջապես այդ միացյալ, համերաշխ կարգապահության և շահագործողների դեմ մղվող մասսայական, դիտակից պայքարի մեջ ե։ Մենք հավիտենական բարոյականությանը չենք համատում և մերկացնում ենք բարոյականության վերաբերյալ ամեն անսակ հեքիաթների կենդիքը։

Բարոյականությունը ծառայում ե այն բանին, վորպեսի մարդկային հասարակությունը վեր բարձրանա, աղատվի աշխատանքի շահագործումից։

Սյու իրականացնելու համար հարկավոր և յերի-
տասարդության այն սերունդը, վորը սկսել և դիտա-
կից մարդ գառնալ բուրժուազիայի դեմ մղվող կար-
գապահ կատաղի կովի պայմաններում։ Այդ պայքա-
րում նա խկական կոմունիստներ և դաստիարակում,
այդ ուղաքարին նա պետք է յենթարկի և նրա հետ կա-
պի իր ուսման, կրթության ու դաստիարակության
յուրաքանչյուր քայլը։

Կոմունիստական յերիտասարդության դաստիարա-
կությունը չափետք և այն լինի, վոր նրան բարոյակա-
նության մասին ամեն տեսակ մեղրածոր ճառեր ու
կանոններ մտառուցվեն։ Այդ չե դաստիարակությունը։

Յերբ մարդիկ տեսնում են, թե իրենց հայրենի ու
մայրենը ինչպիս են կալվածատերերի ու կապիտա-
լիստների ճնշման տակ ապրում, յերբ նրանք իրենք ել
մասնակից են յեղել այն տանջանքներին, վորոնց յեն-
թարկվում են շահագործողների դեմ պայքար սկսող-
ները, յերբ նրանք տեսնում են, թե ինչպիս զոհեր և
պահանջում նվաճվածը պաշտպանելու համար այդ պայ-
քարը շարունակելը, թե ինչպիսի կատաղի թշնամիներ
են կալվածատերերն ու կապիտալիստները, այն ժամա-
նուկ այդ մարդիկ այդ պայմաններում դաստիարակ-
ում են վորպիս կոմունիստներ։

Կոմունիստական բարոյականության հիմքում դըր-
վոծ և կոմունիզմն ամրապնդելու և իրականացնելու
պայքարը։ Ահա թե վորն ե նաև կոմունիստական դաս-
տիարակության, կրթության և ուսման հիմքը։ Ահա
թե վորն ե այն հարցի պատասխանը, թե ինչպիս պետք
և կոմունիզմ սովորել։

Մենք չեյինք հավատա ուսմանը, դաստիարակու-
թյանն ու կրթությանը, յեթե նա վակված լիներ մի-

այն դպրոցում և կտրված լիներ յեռուն կյանքից։ Քա-
նի դեռ բանվորներն ու գյուղացիները ճնշված են
մնում կալվածատերերի և կապիտալիստների կողմից և
քանի դեռ դպրոցները մնում են կալվածատերերի և
կապիտալիստների ձեռքում, յերիտասարդ սերունդը
մնում և կույր ու խավար։

Իսկ մեր դպրոցը պետք ե տա յերիտասարդությա-
նը դիտության հիմքերը, տա կոմունիստական հա-
յացքներ մշակելու հմտություն, պետք ե նրանցից
կրթված մարդիկ պատրաստի։ Դպրոցը պետք ե այն
ժամանակվա ընթացքում, քանի մարդիկ դեռ այնտեղ
սովորում են, նրանցից պատրաստի շահագործողներից
ազատվելու պայքարին մասնակցողներ։

Կոմունիստական Յերիտասարդության Միությունը
միայն այն ժամանակ կարդարացնի ՓԵ անունը, —վոր-
նա կոմունիստական յերիտասարդ սերնդի Միություն
և, —յեթե իր ուսման, դաստիարակության և կրթու-
թյան մին մի քայլը կամի շահագործողների դիմ բո-
լոր աշխատավորների մղած ընդհանուր պայքարին
մասնակցելու հետ։ Վորովհետեւ զուք շատ լավ զիտեք,
վոր քանի Ռուսաստանը մնում և վորպիս միակ բանվո-
րական հանրապետությունը, իսկ մնացած ամբողջ աշ-
խարհում գոյություն ունի հին բուրժուական իրավա-
կարզը, մենք նրանցից ավելի թույլ ենք, վոր ամեն-
անդամ մեղ սովառում ե նոր հարձակում, և յեթե մի-
այն սովորենք համախմբված ու միահամուռ լինել,
մենք կհաղթենք հետաղա պայքարում և, ամրապնդե-
լով, իսկապես անհաղթելի կդառնանք։

Այդպիսով, կոմունիստ լինել՝ նշանակում ե կաղ-
մակերպել և միացնել անող վողջ սերունդը, դաստիա-
րակության և կարդարակահության որինակ ծառայել

այդ պայքարում։ Այն ժամանակ դուք կարող եք սկսել եւ մինչեւ վերջը հասցնել կոմունիստական հասարակության շենքի կառուցումը։

Վորպեսզի սա պարզ լինի բոլորի համար, յես որինակ կրերեմ։ Մենք մեզ կոմունիստներ ենք անլունում։

Ի՞նչ է նշանակում կոմունիստ։

Կոմունիստ—լատիներեն բառ է։ Կոմունիստ բառն առաջ է յնկել ընդհանուր բառից։ Կոմունիստական հասարակություն՝ նշանակում է ամեն ինչ ընդհանուր—Հողը, ֆարբիկաները, ընդհանուր աշխատանքը—ահա թե ինչ է նշանակում կոմունիզմ։

Կարո՞ղ ե այդյօք աշխատանքն ընդհանուր լինել, յեթե ամեն մեկն առանձին հողամասում իր տնտեսությունն է վարում։ Միանդամից ընդհանուր աշխատանք չի ստեղծվի։ Դա յերկնքից վայր չի ընկնում։ Այդ պետք է ձեռք բերել, չառչարվել, ստեղծել։ այդ ստեղծվում է պայքարի ընթացքում։ Այսուղ ճին գիրքը պետք չի, —որքին վոչ վոք չի հավատա։ Այսուղ հարկավոր է կյանքի սեփական փորձ։

Յերբ կոլչակն ու Դենիկինը շարժվում ելին Սիրերից և հարավից, գյուղացիք նրանց կողմն ելին։ Բոլցիդը նրանց դուր չեր գալիս, փորովհետեւ բոլցիկները հացը վերցնում են կայուն զներով։ Իսկ յերբ գյուղացիությունը Սիրիրում և Ուկրաինայում փորձով զդաց կոլչակի և Դենիկինի իշխանությունը, նա հասկացավ, վոր գյուղացու համար այլ յեր չէա—կամ զնա կապիտալիստի ժոտ, և նա քեզ կարմածատիրոջ ճորտությանը կհանձնի, կամ զնա բարձորի հետեւից, վորոնք, ճշմարիտ ե, յուղ ու մեղք չեն խոստանում, վորոնք պահանջում են քեղանից յերկա-

թյա կարգապահություն և կորով դժվարին պայքարում, բայց վորոնք քնզ ազատում են կալվածատերերի ու կապիտալիստների մոտ սարկություն անելուց։

Յերբ նույնիսկ խավար գյուղացիներն այդ հասկացան և տեսան սեփական փորձով, այն ժամանակ նրանք վարձան կոմունիզմի դիտակից, դժվարին դըպրոցն անցած կողմանիցներ։ Կոմունիստական Յերիտասարդության՝ Միությունը հենց այդպիսի փորձը պիտի դնի իր գործունեցության հիմքում։

Յես պատասխանեցի այն հարցին, թե ի՞նչ պետք է սովորենք մենք, ի՞նչ պետք է վերցնենք մենք հին դպրոցից ու հին դիտությունից։ Կաշխատեմ պատասխանել և այն հարցին, թե ի՞նչպես պետք է սովորել այդ միայն դպրոցական դործունեցության ամեն մի քայլը, դաստիարակության, կրթության և ուսման ամեն մի քայլն անխղելիորեն կազելով շահագործողների գիմ վողջ աշխատավորության մզած պայքարին։

Յերիտասարդական այս կամ այն կազմակերպության աշխատանքի փորձից վերցրած միքանի որինակներով յես հասկանալի կերպով ցույց կտամ, թե ի՞նչպես պետք է ընթանա կոմունիզմի այդ դաստիարակությունը։

Բոլորը խոսում են անդրադիտության վերացման մտախ։ Դուք դիտեք, վոր անդրադիտ յերկրում կոմունիստական հասարակություն կառուցել չի կարելի։ Բավական չի, վոր խորհրդացին իշխանությունը համայի, կամ կուսակցությունը վորոշ լողունդ տա կամ այդ դործի համար տրամադրվի լավագույն աշխատով ների վորոշ մասը։ Դա համար հարկավոր ե, վոր ինքը յերիտասարդ սերունդը ձևնամուխ լինի այդ կործին։

Կոմունիզմն այն ե, վոր յերիտասարդության միության մեջ յեղած յերիտասարդությունը, պատահինքը ու աղջիկներն ասեն՝ այդ մեր գործն ե, մենք կմիանանք ու կոնսանք դյուլերը, վորպեսզի անդրադիտությունը վերացնենք, վորպեսզի մեր աճող սերնդի մեջ անդրադեսներ չլինեն: Մենք ձևում ենք, վոր մեր աճող յերիտասարդության ինքնազործունեյությունը նվիրված լինի այդ գործին:

Չուք գիտեք, վոր Ռուսաստանը խալար, անդրադես յերկից արագ կերպով զբագետ դարձնել չի կարելի. բայց յեթե այդ գործին ձեռնամուխ լինի յերիտասարդության միությունը, յեթե վողջ յերիտասարդությունն աշխատի հոգուտ բոլորի, այն ժամանակ 400.000 պատանիներ և աղջիկներ միացնող այդ միությունն իրավունք ունի Կոմունիստական Յերիտասարդության Միություն կոչվելու: Միության նպատակն են նաև, յուրացնելով այս կամ այն գիտությունը, որության հասնել այն յերիտասարդությանը, վորն ինքը չի կարողանում անդրադիտության խալարից դուրս դալ:

Յերիտասարդության միության անդամ լինել՝ նշանակում ե վողջ աշխատանքը, բոլոր ուժերը նվիրել ընդհանուր գործին: Ահա այդ ե կոմունիստական դաստիարակությունը: Միայն այդպիսի աշխատանքով յերիտասարդ մարդը կամ աղջիկն իսկական կոմունիստ ե դառնում: Միայն այն դեպքում կոմունիստներ կդառնան նրանք, յեթե այդ աշխատանքով կարողանան գործնական հաջողությունների հասնել:

Որինակի համար վերցրեք քաղաքամերձ բանջարանոցներում կատարվող աշխատանքը: Դա կոմունիստական Յերիտասարդության Միության խնդիրներից մե-

կըն ե: Ժողովուրդը քաղցած ե, Փարբիկաներում և կըն ե: Ժողովուրդը քաղցած ե, Սովոր վիրկելու համար գործարաններում սովոր ե: Սովոր վիրկելու համար ակետք ե զարգացնել բանջարանոցները, բայց հողագործությունը տարվում ե հին ձևով:

Յեթ զրա համար ել պետք ե, վոր ավելի դիտակից տարբերը գործի կալչեն, և դուք այն ժամանակ կտեսնեք, վոր բանջարանոցները կմեծանան, նրանց տարածությունը կընդարձակվի, արդյունքը կրարելավիլի: Այդ գործում կոմունիստական Յերիտասարդության Միությունը պետք ե ակտիվ մասնակցություն ունենա: Յուրաքանչյուր միություն կամ միության յուրաքանչյուր րջիջ այդ գործն իրենը պիտի համարի:

Կոմունիստական Յերիտասարդության Միությունը պետք ե հարվածային խումբ լինի, վորն ամեն մի աշխատանքում ցույց ե տալիս իր ողնությունը, հրապարակ ե բերում իր նախաձեռնությունը, իր ձեռներեցը: Միությունն այնպիս պիտի լինի, վոր ամեն մի բանվոր նրա մեջ տեսնի այնպիսի մարդկանց, վորոնց ուսումը թերևս անհասկանալի կլինի նրան, վորոնց ուսմանը նա, դուցե, միանդամից չհավատա, վորոնց վորոնց կենդանի գործով՝ նրանց գործունեյությաց վորոնց կենդանի գործով՝ նրանց գործունեյության հիման վրա՝ նա տեսնի, վոր դրանք իսկապես թյան հաջողիկն են, վորոնք նրան ճիշտ ճանապարհ են ցույց տալիս:

Յեթե կոմունիստական Յերիտասարդության Միությունը չկարողանա բոլոր ասպարեզներում այդպիս կառուցել իր աշխատանքը, այդ նշանակում ե, վոր նա թեքվում ե դեպի հին բուրժուական ճանապարհ:

Մեր դաստիարակությունը պետք ե միացնենք շահագործողների գեմ աշխատավորների մզած պայքա-

բին, վորակեսղի ողնենք աշխատավորներին կոմունիզմի ուսամունքից բղխող խնդիրները լուծելու:

Միության անդամներից ամեն մեկն իր ազատ ժամը պետք է բանջարանոցը լավացնելուն դորձաղրի, կամ վորհե Փարքիկայում ու գործարանում յերիտասարության՝ ուսման դործը կազմակերպի և այլն:

Մենք կամենում ենք Ռուսաստանն աղքատ ու խըլ-ճուկ յերկրից հարուստ յերկիր դարձնել: Յեկ պետք է, վոր կոմունիստական Յերիտասարդության Միությունն իր կրթությունը, ուսումն ու զատիքարակությունը միացնի բանվորների և զյուղացիների աշխատանքին, վոր նա չփակվի իր դպրոցներում ու չբավականա միայն կոմունիստական դրքեր ու բրոցուրներ կարգալով:

Միայն բանվորների և զյուղացիների հետ մասին կատարված աշխատանքով կարելի յի խսկական կոմունիստ դառնալ:

Ու պետք է բոլորը տեսնեն, վոր Յերիտասարդության Միության մեջ մտնող ամեն մեկը գրադետ և, միաժամանակ և աշխատել զիտե: Յերբ բոլորը տեսնեն, թե ինչպես մենք հին դպրոցից դուրս քշեցինք խնառությամբ վարժեցնելու հին ձեզ, փոխելով վերջինը զիտակցական կարգապահությամբ, ինչպես յուրաքանչյուր յերիտասարդ դնում և մասնակցելու շաբաթորյաներին, ինչպես նրանք ոգտագործում են յուրաքանչյուր քաղաքամերձ տնաեսություն, վորակեղի ողնեն աղջարնակությանը, ժողովուրդն աշխատանքի լրա այլես այնպես չի նայի, ինչպես նայում եյին առաջ:

Կոմունիստական Յերիտասարդության Միության խնդիրն այն է, վոր զյուղում կամ իր թաղամասում

ողնություն կազմակերպի այնպիսի գործին—վորքը որինակ եմ վերցնում—ինչպիսին և մաքրության ապահովումը կամ սննդի բաշխումը:

Ի՞նչպես եր արգում այդ կազմակետավական հին հասարակության մեջ:

Ամեն մեկն աշխատում եր միայն իրեն համար, և վոչ վոք չեր նայում՝ կա՞ն արդյոք ծերունիներ կամ հիմանդներ, կամ թե ամբողջ անտեսությունը ծանրանում և կողմ վրա, վորն այդ պատճառով ճնշված ու սորկացած վիճակումն և դանվում: Ո՞վ ե կովկալու դրա դեմ: Յերիտասարդության միությունները, վորոնք պետք ե առնե, թե՝ մենք այդ կվերափոխենք, մենք կազմակերպենք յերիտասարդ մարդկանց ջոկատներ, վորոնք սիստեմատիկ կերպով այցելելով տները, կողնեն մաքրության ապահովմանը կամ ուշնըդի բաշխմանը, վորոնք կազմակերպված աշխատանքը կտանեն հոգուտ ամբողջ հասարակության, ճիշտ բաշխելով ուժերը և ցույց տալով, վոր աշխատանքը պետք ե կազմակերպված աշխատանք լինի:

Այն սերունդը, վորի ներկայացուցիչներն այժմ մոտ 50 տարեկան են, չի կարող հույս ունենալ, թե կտեսնի կոմունիստական հասարակությունը: Մինչեւ այն ժամանակ այդ սերունդը կմեռնի:

Իսկ այն սերունդը, վորն այժմ 15 տարեկան է, նա և կտեսնի կոմունիստական հասարակությունը, և ինքը կկառուցի այդ հասարակությունը:

Ու նա պետք է գիտենա, վոր իր կյանքի վողջ նպատակն և այդ հասարակության կառուցումը:

Հին հասարակության մեջ աշխատանքը տարիում եր առանձին ընտանիքներով, և վոչ վոք չեր կապակցում այն, բացի ժողովրդի մասաներին ճնշող կար-

վածատերերից և կապիտալիստներից։ Մենք պետք ենք մենք մի աշխատանք, վորքան եւ կեղսոս ու դժվար մնի այն, կառուցենք այնպես, վոր ամեն մի բանվոր ու գյուղացի իրեն վրա նայի այսպես։ յես աղատ աշխատանքի մեծ բանակի մի մասն եմ, և ինքո կվարողանամ կառուցել իմ կյանքն առանց կալվածատերերի ու կապիտալիստների, կկարողանամ հաստատել կոժունիստական կարգ։

Հարկավոր են, վոր Կոմունիստական Յերիտասարդության Միությունը բոլորովին՝ փոքր հասակից, տասներկու տարեկանից սկսած, դաստիարակի գիտակից ու կարգապահ աշխատանքի մեջ։

Ահա ինչպես կարող ենք հույս ունենալ, վոր այժմ զրված խնդիրները կլուծվեն։

Մենք պետք են նկատի առնենք, վոր յերկրի ելեկտրիֆիկացիայի համար հարկավոր են առնվազն տասնարի, վորպեսզի մեր աղքատացած յերկերը կարողանաւ սպասարկվել տեխնիկայի վերջին նվաճումներով։

Յեվ ահա այն սերունդը, վորն այժմ 15 տարեկան են և վորը 10—20 տարուց հետո ապրելու յե կոմունիստական հասարակության մեջ, պետք են իր ուսման բոլոր խնդիրները դնի այնպես, վոր ամեն որ յուրաքանչյուր գյուղում, յուրաքանչյուր քաղաքում յերիտասարդությունը գործնականորեն լուծի ընդհանուր աշխատանքի այս կամ այն, թեկուղ ամենափոքր, թեկուղ ամենահասարակ խնդիրը։

Ինչ չափով վոր այդ կատարի յուրաքանչյուր գյուղում, ինչ չափով վոր զարդանա կոմունիստական մըցումը, ինչ չափով վոր յերիտասարդությունն ապացուցի, թե նա դիտե իր աշխատանքը միավորել, — այդ

չափով ապահովված կլինի կոմունիստական չինարդության հաջողության տեսակետից նայելով իր ամեն մի քայլին, միայն հարցնելով իրեն՝ արդյո՞ք ամեն բան արել ենք մենք միավորված, պիտակից աշխատավորներ դառնալու համար, միայն այդ յերկարատես պրոցեսում կոմունիստական միայն իրին կմիացնի, աշխատանքի միացյալ բանակ կկազմի և ընդհանուր հարդանքի կարժանանա։

Միայն այդ չինարդության հաջողության տեսակետից նայելով իր ամեն մի քայլին, միայն հարցնելով իրեն՝ արդյո՞ք ամեն բան արել ենք մենք միավորված, պիտակից աշխատավորներ դառնալու համար, միայն այդ յերկարատես պրոցեսում կոմունիստական միամներին կմիացնի, աշխատանքի միացյալ բանակ կկազմի և ընդհանուր հարդանքի կարժանանա։

Առաջին անգամ տպվել է «Պրավда»-ի

№ № 221, 222 և 223-ում, 1920 թ.

«ռկուտքը» 5-ին թ-ին և 7-ին։



47
329.154(47)+[335.5]

Ա. Հանքարքանի խմբաղբական հակովության
Տեխն. խմբ. Ա. Խաչտրյան

Մրգագրիչ Վ. Զիդեղյան
Կոնսուլ որբագրիչ Յն Տ. Մինասյան

Գլամելի լիազոր 1032, Հրատ. № 744

Պատվեր № 295, տիբաժ 5000

Հանձնվել ե արտադրության 29/XII 1939 թ.

Սառացրվել ե տպագրելու 13.1 1940 թ.

Գինը 40 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
տպարան, Եկեղեց, Ալահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0181509

ЧИСЛО 40 Ч.

В. И. ЛЕНИН

ЗАДАЧИ СОЮЗОВ МОЛОДЕЖИ

Государственное издательство политической литературы

Берлин • 1940